ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
«28» 12 2020թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000133

Ձեռնարկողը՝ ***«Առաջին ծիծեռնակ» ՍՊԸ***
Արմավիրի մարզ գ. Գրիբոյեդով

Գործունեությունը՝ ***Էջմիածին քաղաքի, Էջմիածին-Մարգարա խճուղի թիվ 12, 12/1 հողամասերում նախատեսվող ավտոգազալիցքավորման ճնշակայանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
Արմավիրի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝ Գ. Գևորգյան

Առդիր եզրակացությունը՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 000133

<<28>> 12 2020թ.

Էջմիածին քաղաքի, Էջմիածին-Մարգարա խճուղի թիվ 12, 12/1 հողամասերում նախատեսվող ավտոգազալիցքավորման ճնշակայանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ

Ձեռնարկող՝	«Առաջին ծիծեռնակ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Նախնական գնահատման հայտ Գ կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Արմավիրի մարզ, Էջմիածին քաղաք, Էջմիածին-Մարգարա խճուղի 12, 12/1

Ներածական մաս Էջմիածին քաղաքի, Մարգարայի խճուղի թիվ 12, 12/1 հասցեներում նախատեսվող ավտոգազալցաճնշակայանի նախագիծը մշակվել է <<Հիդրոգազշիննախագիծ>> ՍՊԸ-ի կողմից, տարածքում կառուցապատում իրականացնելու համար հիմք է հանդիսանում տարածքի սեփականատեր «Առաջին ծիծեռնակ» ՍՊԸ-ի սեփականության իրավունքը հաստատող N22102019-04-0073 անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայականը:

Համաձայն նախնական գնահատման նախատեսվող ավտոգազալիցքավորման ճնշակայանի կառուցվելու է անշարժ գույքի սեփականության իրավունք ունեցող 0.2349 հաընդհանուր մակերեսով հողամասում՝ Արմավիրի մարզի Էջմիածին քաղաքի համայնքի կողմից տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքի հիման վրա:

Հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, իսկ գործառնականը՝ հասարակական կառուցապատման: Գործունեության նպատակը ավտոգազալիցքավորման ճնշակայանի կառուցումն է:

Նախատեսվող գործունեությունը համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի ա) ենթակետի հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս.

Քաղաք Էջմիածին, Մարգարայի խճուղի թիվ 12, 12/1 հասցեներում նախատեսվող ավտոգազալցաճնշակայանի նախագիծը մշակվել է <<Հիդրոգազշիննախագիծ>> ՍՊԸ-ի կողմից, տարածքում կառուցապատում իրականացնելու համար հիմք է հանդիսանում տարածքի սեփականատեր «Առաջին ծիծեռնակ» ՍՊԸ-ի սեփականության իրավունքը հաստատող N22102019-04-0073 անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայականը: Արմավիրի մարզի Էջմիածին համայնքում << Առաջին ծիծեռնակ>> ՍՊԸ-ին պատկանող տարածքում կառուցվող բնական գազի լիցքավորման ճնշակայանի գազաֆիկացման աշխատանքային նախագիծը մշակված է համայնքի կողմից տրված ճարտարապետա-հատակագծային առաջադրանքի, <<Գազպրոմ Արմենիա>> ՓԲԸ-ի կողմից տրված N0 02-22/2224 գրության առ 15.05.2019թ /տեխնիկական պայմանի/, հիմք Տրանս Գազ ՍՊԸ-ի կողմից տրված N0 01-13/537 գրության առ 03.05.2019թ և ՀՀՇՆ IV-12.03.01-04-ի համաձայն:

Տարածքը նախկինում կառուցապատված է: Առկա են շինություններ՝ վերանորոգման կետ-181.2մ^2, լցակայան – 7.8մ^2, հանգստի սենյակ-20.4մ^2, ավտոլվացման կետ-31.7մ^2, պարիսպ-20.2մ^2: Տարածքում առկա կառուցապատման մակերեսը կազմում է 261.3մ^2: Գոյություն ունեցող բոլոր շինությունները քանդվելու են կամ վերապրոֆիլավորվելու են :

Տարածաշրջանի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են վերին պլիոցենային և պլեյստոցենային բազալտները, տուֆերը և տուֆաբրեկչիաները, որոնք տեղադրված են երրորդական հասակի նստվածքային հաստաշերտերի վրա և ծածկված են ավելի երիտասարդ ալյուվիալ-պրոլյուվիալ-դելյուվիալային նստվածքներով:

Համաձայն նախնական գնահատման հայտի շինարարական աշխատանքները տևելու են 300օր: Շինարարական աշխատանքների ընթացքում օգտագործվելու են շինարարական մեքենաներ և մեխանիզմներ՝ էքսկավատոր՝ 1 հատ, կռունկ՝ 1 հատ, բեռնատար՝ 1 հատ, ինքնաթափ՝ 1 հատ: Նախատեսվող գործունեության շինարարական աշխատանքների կատարման ժամանակ օգտագործվելու են շինանյութեր՝ ավազ, խիճ, բետոն, քար, ամրան, ապակի և այլն: Շինարարության համար անհրաժեշտ շաղախը և բետոնը բերվելու են պատրաստի վիճակում մասնագիտացված տրանսպորտային միջոցներով:

Շինարարական և գազատարի անցկացման աշխատանքերի ընթացքում նախատեսվում է հողային աշխատանքների հանույթ 150մ^3 և ետլիցք՝ 120մ^3, մնացած զանգվածը կօգտագործվի տարածքի համահարթեցման նպատակով:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական աշխատանքերի ընթացքում, շինարարական աղբն է մոտ 60մ^3 (55մ^3 տարածքում առկա շենք շինությունների քանդումից): Շինարարական աղբը ամբողջությամբ կտեղափոխվի համայնքի հետ պայմանագրային հիմունքներով հատկացված: Նախատեսվող գազալիցքավորման կայանում արտադրական թափոնների քանակը կազմում է 220 կգ/տարի որոնք սանձառայության թույլատրությունից հետո կարող են տեղափոխվել քաղաքային աղբանոց:

Բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման համար՝ և շինանձնակազմի խմելու կենցաղային նպատակների համար: Ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որպեսզի չառաջանան մակերևութային հոսքեր, այլ ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար:

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԱԳԼՃԿ-ի տարածքում նախատեսված գազալցակետային ռամպաները միջսյունային չափերով թեթև ծածկով շինություններ են / 3.5մx11.0մ և 5.5մx31.0մ/: Կոմպրեսորային մոդուլը 4.0մx8.0մ առանցքային չափերով արտադրա-տեխնոլոգիական մեկ հարկանի մասնաշենք է, H=3.6մ բարձրությամբ, պատերը՝ 400մմ հաստությամբ: Ծածկը իրականացվում է մետաղական ծպեղային ֆերմաներից: Բարձր ճնշման պահուստային մարտկոցների ստորգետնյա մոդուլը / գազակուտակիչ բունկեր/ 4.0մx7.0մ առանցքային չափերով արտադրատեխնոլոգիական մասնաշենք է , H=-1.75մ- +2.0մ բարձրությամբ, 300մմ հաստությամբ միաձույլ ե/բ պատերով, ուղղանկյունաձև ստորգետնյա շինություն, որի ծածկը իրականացվում է մետաղական ծպեղային ֆերմաներից: Սպասարկող շինությունը 10.0մx4.5մ առանցքային չափերով ծառայողական շինություն է, մեկ հարկանի, բարձրությունը՝ H=5.0մ, 400մմ հաստությամբ պատերով : Ծածկը իրականացվում է մետաղական ծպեղային ֆերմաներից: Սպասասրահը 10.0մx 4.5մ առանցքային չափերով շինություն է, մեկ հարկանի, բարձրությունը՝ - H=5.0մ, 400մմ հաստությամբ պատերով:

Հակահրդեհային նպատակների համար նախատեսվում է 1 հատ հակահրդեհային հիդրանտ և V=50մ^3 տարողությամբ ստորգետնյա մետաղյա բաք, բացի դա հրդեհաշիջման համար նախատեսված է նաև 2 հատ ՕՊ-100 տիպի փոշային կրակմարիչ, 15 հատ փրփրային կրակմարիչ և 15 հատ 1.5x1.5 ասբեստյա ծածկոց: Գազալցակետի հեռավորությունը ճանապարհից – 15 մետրից ոչ պակաս:

Նախատեսվող ԱԳԼՃ կայանի ջրամատակարարումը և ջրահեռացումը կիրականացվի համաձայն <<Վեոլիա ջուր>> ՓԲԸ կողմից տրամադրված N ԷՀ5610 տեխնիկական պայմանի:

Գազամատակարարումը կատարվելու է <<Գազպրոմ Արմենիա>> ՓԲԸ կողմից տրված տեխնիկական պայմանի համաձայն:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է կանաչապատել և բարեկարգել տարածքը: Կանաչապատվող տարածքի մակերեսը կազմում է 469.8մ^2 (20%), նախատեսվում է սիզախոտ և թփեր: Ոռոգման նպատակով ջուրը կբերվի ավտոցիստեռներով՝ պայմանագրային հիմունքներով

Շինարարական աշխատանքների ընթացքում տարածքում առկա հողաբուսաշերտը կպահպանվի տարածքում հատուկ նախատեսված վայրում: Շինարարական աշխատանքների ավարտից հետո կօգտագործվի տարածքի բարեկարգման համար: Շինարարական և գազատարի անցկացման աշխատանքերի ընթացքում նախատեսվում է հողային աշխատանքների հանույթ 150մ^3 և ետլիցք՝ 120մ^3, մնացած զանգվածը կօգտագործվի տարածքի համահարթեցման նպատակով: Շինարարական աշխատանքներում մասնակցող աշխատողների ընդհանուր թիվը՝ 38 մարդ:

Նախատեսվող գործունեության կատարման ժամանակ լինելու են շրջակա միջավայրի վրա ազդեցություններ, որոնք հիմնականում կապված կլինեն փորման բեռնման աշխատանքների, հողային զանգվածների տեղափոխման, շինարարական տեխնիկայի շահագործման, ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման, բետոնային աշխատանքների հետ:

Համաձայն նախնական գնահատման հայտի նախատեսվում են օդային ավազանի, հողային և ջրային ռեսուրսների աղտոտումից պահպանման, դրանց արդյունավետ օգտագործման, թափոնների կառավարման, աղմուկի մակարդակի ու արտակարգ

իրավիճակների ռիսկի նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են միջոցառումների ծրագրում և մոնիթորինգի պլանում, այդ թվում՝

- շինարարական աշխատանքների /փոշի առաջացման աշխատանքներ/ ընթացքում անհրաժեշտ է իրականացնել ջրցան,
- պարբերաար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգավորում:
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումը պետք է իրականցվի փակ ծածկով մեքենաներով.
- սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը:
-ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,
- տարածքի հոսքերը կմիավորվեն մեկ բակային ցանցում և կմիացվեն սելավային ջրացանցին:
- անձրևվների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերը կուղորդվեն պարզարան:
- շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,
- շինարարական սարքավորումներից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը բացառելու համար աշխատաներում կներգրավեն ժամանակակից տեխնիկական միջոցներ:
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,
- շինարարության ընթացքում առաջացող շինարարական աղբը 60խմ քանակով կպահվի պոլիէթիլենային պարկերում հարթակի վրա և շինարարական աշխատանքների ավարտից հետո կտեղափոխվի համայնքի կողմից հատկացված վայր:
- հողի բերի շերտը՝ մոտ 200մ2 և 30սմ հզորությամբ(60մ^3), օգտահանումը և պահպանումը կիրականացվի հանգստի գոտու տարածքում հատուկ նախատեսված վայրում: Բերրի շերտի հանումը, տեղափոխումը, պահեստավորումը և հետագա օգտագործումը իրականացվելու է հողի բերրի շերտի հանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջներին համապատասխան, համաձայն ՀՀ կառավարության 2017թ փետրվարի 11-ի N 1404-Ն որոշման:
- հողի բերրի շերտը հանվում է տարվա տաք և չոր ժամանակաշրջանում: Նախքան բերրի շերտը հանելը՝ կատարվում են հողի մակերեսից կոճղերի, թփերի և խոշոր քարերի մաքրման նախապատրաստական աշխատանքներ: Հողի բերրի և հնարավոր բերրի շերտը հանվում է տարանջատված, ապարներից առանձին:Կիրականացվի հողի բերրի շերտ ծածկում, պահեստավորված հողի մեկուսացում՝ եզերված պատնեշներով (բորդյուրներ), բացառելով

շինարարական աշխատանքների հետևանքով դրա աղտոտումը: Շինաշխատանքների ավարտից հետո բերրի շերտը կոգտագործվի տարածքի համար նախատեսված կանաչապատման աշխատանքներում :

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

- Մինչ աշխատանքների սկիզբը բոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդները, անցնում են հրահանգավորում ըստ աշխատանքի անվտանգության կանոնների: Հրահանգավորումը իրականացնում է աշխատանքների ղեկավարը:

- Մինչ աշխատանքների սկիզբը շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հագեցվում են հրդեհաշիջման առաջնային միջոցներով ու դեղ-արկղիկով, իսկ աշխատողներն անցնում են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժ.օգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում:

- Հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:

- բոլոր աշխատողներին տրվելու են անհատական պահպանության միջոցներ:

- շինարարական աշխատանքների տեղամասերում կտեղադրվեն հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, կփակցվեն հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն:

- հակահրդեհային անվտանգության միջոցառումների իրականացման համար տարածքում կտեղադրվի հրշեջ հիդրանտ:

- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,

- շինարարական գործընթացին ներգրավել ժամանակակից տեխնիկական միջոցներ, ինչպես նաև դրանք շահագործել տեխնիկական նորմալ վիճակում:

- պարբերաբար ստուգել և կարգաբերել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները,

- շինարարական տեխնիկայի ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց աղմուկի մակարդակին:

Պատճառաբանական մաս. Համաձայն նախնական հայտի, ԱԳԼՃԿ-ն կառուցվելու և շահագործվելու է ՀՀ-ում գործող օրենսդրության ու նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

Շրջակա միջավայրի վրա ազդեցությունները լինելու են շինարարության փուլում և կրելու են ժամանակավոր բնույթ: Հայտով նախատեսված միջոցառումների կատարման արդյունքում կնվազեցվեն շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները: Հայտը լրամշակվել է նաև տրված դիտողությունների և առաջարկությունների հիման վրա: Փորձաքննական գործընթացին ներգրավվել են առողջապահության նախարարությունը, քաղաքաշինության կոմիտեն, պաշտպանության նախարարությունը, արտակարգ իրավիճակների նախարարությունը և շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները:

Օրենսդրությամբ սահմանված կարգով Էջմիածին քաղաքում իրականացվել են հանրային քննարկումներ, որի ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել նախատեսվող գործունեության վերաբերյալ:

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Փորձաքննական պահանջներ

1. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել նախնական գնահատման հայտով ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, իսկ դրանց անհնարինության դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ուղղված բնապահպանական և շինարարական նորմերի պահպանմանը:

2. Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել ՀՀՇՆIV-11.05.02-99 շիննորմերի և 2005 թ. դեկտեմբերի 22-ի «Անվտանգության կանոնները գազի տնտեսությունում տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N2399-Ն և 2008թ. օգոստոսի 28-ի «Ավտոգազալիցքավորման ճնշակայանների կառուցման և շահագործման նվազագույն պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N1101-Ն ՀՀ կառավարության որոշումներով և 2014թ. հոկտեմբերի 14-ի, «Քաղաքաշինություն. քաղաքների և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» հոդվածով հաստատված ՀՀ Քաղաքաշինության նախարարի N263-Ն հրամանով և ապահովել «Հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում սանհանգույցներին առաջադրված պահանջները և շինարարական նորմերը» և դրանց հիման վրա հայտով նախատեսված լուծումները:

3. Գործունեությունն իրականացնելիս անհրաժեշտ է առաջնորդվել Առողջապահության նախարարի 2007 թվականի ապրիլի 4-ի թիվ 236-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջներով :

4. Շինարարական գուրծընթացում աշխատողների անվտանգության և առողջության ապահովման համար անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 23-րդ գլխի պահանջներով:

5. Անհրաժեշտ է ապահովել հայտով ամրագրված կանաչապատման աշխատանքների իրականացումը և խնամքը:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Առաջին ծիծեռնակ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Էջմիածին քաղաքի, Մարգարայի խճուղի թիվ 12, 12/1 հասցեներում նախատեսվող ավտոգազալիցքավորման ճնշակայանի կառուցելու շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Գլխավոր մասնագետ՝ Յու. Մատինյան